

Կ Լ Ի Մ Ա Յ .

(Նորագուշական տէ՛ - Աբեքան 1880, հայելքեր)

Կլիմայք ողբերգութեանը բայսերի և ինդանների վերայ — Կլիմայի յատկաւթիւնները մի որոշ բնաւորութիւն են տալիս ամեն բոյսերին և կենդանիներին, Գերմանական ծովի տփերի վերայ չեն բռւնում արմաւենիներ և սառուցեալ ովկիանոսի մօտ չեն գտանւում ոչ առիւծներ, ոչ վազրներ, և ոչ ուրիշ տրեագարձի կենդանիները, միւս կողմից շատ զուր աշխատութիւն պիտի լինէր մեր կողմից եթէ մենք վնասուինք Ամազոն գետի անտառներում մեր հիւսիսային սօսին, և կամ թէ Հնդկաց ովկիանոսում ծովային հօրթեր, Մարզն ևս բայսերի և կենդանիների նման բնութեան ազդեցութեան տակն է, Կլիմայի պայմանները որոշումն թէ նորա գործարանների կազմութեան մանր առանձնութիւնները, թէ կենսական սովորութիւնները թէ տնտեսական պայմանները և թէ բոլոր կենցաղավարութիւնները. Հետեաբար կարօղ են նաև ազդեցութիւն ունենալ հասարակական առողջութեան վերայ, Խապաշտ Հնդկաստանցին, նոր աշխարհի գարմիամօրթմարդակերը, Խտալիսյի ծոյլ լացարոնները, պարզամիտ Լապլանտացին. — բոլոր ժողովուրդներն էապէս զանազանուումն միեւնացից, Տաք կլիմաների հարուստ բնութիւնը հեշտացնումէ մարդուս համար կենսական պահանջմունքների բաւականութիւնը, բայց նորանից խում է շարունակ ֆիզիկական և մտաւոր աշխատութեան ընդունակութիւնը. այդպիսի երկրների բնակիչները շուտով ֆիզիկապէս զարգանումն, բայց չկարծողանալով դիմանալ արտաքին վատ ազդեցութիւններին՝ մեռնումն աւելի շուտով քան թէ հիւսիսայինները, Քեեսային ցուրտը թէկ այնքան վատ է ազդում մարդուս բազմակողմանի զարգացման վերայ, ինչպէս արեաղարձի տաքութիւնը, այնու ամենայնիւ նա դարձնումէ մարդուս թէ ֆիզիկական և թէ մտաւորական կերպիւ դաշաճ (թզուկ), այսինքն նորա հասակը կարծացնումէ և նորա մտաւորական ոյժը նուազացնումէ, Աւելի անյաջող կերպիւ ներգործումէ հիւսիսային ցուրտը մանուկների վերայ. նորածին մանկան գործարանը լինելով քնքոյշ, պէտք ունի պահպանելու և շատ շուտով ու հեշտութեամբ ընկճուումէ ցուրտ կլիմայի տակ մինչև որ կարողանայ կազդուրի իլ այնպէս, որ մաքառի վատ կլիմայի ազդեցութեան հետ. Մարդուս բնաւորութեանը ամենից աւելի համապատասխանումէ սառըն-բարեխառն կլիման ինչպէս են, Անդղիայի, միջին և հիւսիսային Գրանսիայի, Գերմանիայի, Զուբրիցերիայի և ոյլն կլիման, Այստեղ մարզս աւելի շատ պէտի աշխատի օրւայ հացը ձեռք բերելու համար, քան թէ հարաւային երկրում, բարեխառն կլիման թիմեացնումէ եռմերի ձգտումը և պահպանումէ մտքի թարմութիւնը, այնպէս որ աշխատանքը ախորժելի է լինում և զիսաւոր միջոց է դառնում կեանքի համար, գործունեութիւնը տեղի է տալիս. » dolce far niente ին, կտղմելով հարաւային կեանքի բնաւո-

բութիւն. բարեխառն կլիմայում քնքով գործարանը աւելի է զարդանում քան թէ արևագարձի երկրներում ու ուստի նա աւելի ամուր է և աւելի հեշտութեամբ կարօղէ մաքառ ել իրեն բազմակողմանի զարդացմանը արգելք եղող կողմանակի ուժերի հետ. Եյս պայմաններից կախումն ունին զիտութեան մեծ յառաջադիմութիւնները և թագաւորական կեանքի լոյն զարգացումը որոնք գտանուում մեն բարեխառն կլիմայում:

Հիւանդանների աշխարհութեամբ պարագան և կլիմայի ուղղեցունենալ հասարակուց առաջնուննեան վերայ. Կլիմայի բացի հասարակաց առողջութեան վերայ կողմանակի ազգիլուց որը արտայայտւումէ բնաւորութեան մջ, նիւթական բարեկեցութեան պայմանների և ազգերի կառավարութեան և թագաւորական կազմութեան մէջ, իւրաքանչիւր կլիմայի առանձնութիւնները անմիջապէս ազդումեն և յայտնի հիւանդութիւնների յառաջանաւլուն այնպէս որ համարձակ կարելի է խօսել հիւանդութիւնների աշխարհագրական տարածման վերայ որը կախումն ունի կլիմայից: Կան այնպիսի պայմաններ: որոնք ցոյց են տալիս խոլերայի և զեղին տենզի սերմերը և որոնք իւրեանց վերանորոգման և տարածման համար տեղ են գտնում տաք և խոնաւ երկրներում. արիւնահօսութիւն պատաշումէ գլխաւորապէս հարաւային երկրներում. ընդհատ տենդերը միմիայն մի քանի գեպքերում անցնումեն մինչեւ հիւսիսային լայնութեան 60 աստիճանը, միւս կողմից հիւսիսային ցուրտ ողբ ցնցումէ շնչառութեան գործարանները և յառաջացնումէ բորբոքումն, որը շատ անգամ բարեկացաւի յառաջանալու պատճառ է լինում: Հիւանդութիւնների կախումն ունենալը կլիմայից և եղանակից շատ պարզ բացատրւումէ նորանով: որ բարեխառն գօտիներում ձմեռ ժամանակ տիրապետումեն հիւսիսային երկրների բնաւորութեան վերաբերեալ հիւանդութիւններ: — շնչառութեան գործարանների հիւանդութիւններ, իսկ ամառը սորա հակառակ է լինում: այսինքն պատշումէ մարսողական գործարանների խանգարումն տաք գօտիներին պատկանեալ երկրների համեմատ:

Մարգիկ՝ կլիմայի և եղանակի ազգեցութիւնը հասարակաց առողջութեան զրութեան վերայ՝ շատ անգամ մեծացնումեն: մենք ի վաղուց սովորել ենք կուտել ամեն բանի պատճառը կլիմայի վերայ որ կախումն ունի մարդկային անմտութիւնից կենցաղավարական վատ պայմաններից: զոր օրինակ: Որ և է քաղաքի մեռածների թիւ մեծութիւնը վերագրումն ամենաբարձր աստիճանի վետասակար կլիմային: մինչդեռ փոքր ի շատէ քննութիւնը ցոյց է տալիս: որ այսպէս ահազին բազմութեամբ մեռնելու պատճառը մեծ մասամբ յառաջանումէ նորածին մանակներին վատ կերակրելուց: որոնք մեծ քանակութեամբ մեռնումեն: Որ և է երկրի բնակենակութեամբ մեռնելու իսկական պատճառները իմանալ շատ կարեւոր է: քանի որ նրանց պատճանները կլիմային են վերաբերում և ակամայ անհոգ են մեռնում և ոչ մի առանձին միջոց չեն բանեցնում առողջապահական պայմանները լուացնելու մասին: որովհետեւ բնութեան

ոյժերի դէմ պատերազմել զժուար է և շատ անգամ անօգտակար իսկ եթէ պատճառները յառաջանումեն անհասկացողութիւնից անյարմար ունդից բնակարանների վատ պայմաններից և այլն այն ժամանակ գործին օրինաւոր նայելը և բարի ցանկութիւնը կարող են գարման լինել ցաւին։

Յիրաւի՞ որ չպէտք բացասել առողջ և անառողջ կլիմաների ազգեցութիւնը այնպիսի տեղերում ուր երկիրս ճախճախուաւէ զրկւած է բնական հողային ջրի հսաւնքից ուր ամառւայ և ձմեռւայ զիշերւայ ու ցերեկւայ ջերմութեան աստիճանը շատ զանազան են ի հարկէ կլիմայի ազգեցութիւնը առողջութեան վերայ վեասակար պիտի լինի եթէ մարդս ազատ է ընտրելու իւր բնակութեան տեղը նա պէտքէ այդպիսի երկրներից հեռու կենայ ընդհակառակն ուր հողը չոր է (աւազոտ կամ քարոտ) օդի ջերմութեան աստիճանը հաւասարաշափ բարեխանն է ուր գտանուամն սառն քամիների դէմ արգելքներ և արեգակը բաւականաշափ ներգործումէ այնտեղ կլիման ախորժելի է Այնու ամենայնիւ աւելի լաւ կը լինէր եթէ ի նկատի ունենանք այս գէպքերը նոր տեղերում բնակութիւններ հստատելու միջոցին։

Այս ըստ կլիմայի փոփոխութիւնը շատ անգամ սաստիկ կերպով ազդումէ մարդու վերաց նա հաւասարազօր է բալոր առաջւայ սպայմանների փոփոխութեան և կեանքի սովորութիւնների հետ մարդս վայրկենաբար ենթարկումէ ազգեցութիւններին որոնց անընդունակ է նորա գործարանի կազմութիւնը ուստի շատ զարմանալի չէ որ նորա առողջութիւնը վատանայ Արեաղարձի բնակչի հիւսիսային խիստ կլիմայի տակ գաղթելը որը ներկայացնումէ սաստիկ հակառակութիւն նորա հայրենիքի կլիմայի հետ կարօղ է նորան մահառիթ լինել Եւրոպայուն շատ վանդաւոր է սառն կլիմայից շուտով անցնել դէպի տաքը Այդպիսի փոփոխութիւնը կարելի է համեմատել կերակրի հետ պատահած փոփոխութեան հետ նորա կերակուրը կարելի է ըստ ինքեան լաւ է բայց շամապատախանելով առաջայ սովորութիւններին նոր վատ է մարսում մինչև որ ստամքու յարմարի նորան Մանամի մարդս ընդունակ է սովորելու նոր կլիմայի պայմաններին Ըատպարզ յայտնի է որ այս միջոցին գործարանների կազմութեան մէջ յառաջնուամն փոփոխութիւններ որոնք աստիճանաբար յարմարեցնում են զլիսու որ գործարանները նոր պայմանների այս յարմարեցնելու յառաջատուութիւնը կոչումէ կլիմային ընտելանալ (Ակլիտացիա)։

Այնու ամենայնիւ մարդուս նոր կլիմայի պայմանների յարմարւելու ընդունակութիւնը սահմանափակւած է Արեաղարձում կան այնպիսի երկրներ որոնց մէջ Եւրոպացին երբէք չէ կարօղ ընտելանալ կլիմային (արեամտեան Հնդկաստանի կղզիներ Մեքսիկայի ծովեղերք Ճավայի և Առևմատրայի կղզիներ և այլն) և այնտեղ կազմած զաղթականութիւնը պիտի ոչչանար եթէ անդադար չաւելանար գաղթողների թիւը Մինչև անգամ

արևելեան Հնդկաստանում Եւրոպացիներին անկարելի է բոլորովին ընտելանաւ կլիմային, — այնու ամենայնիւ այնտեղ եղած Անգլիական զինուորների մահը միշտ լինուումք մնաւ, և Հնդկական զինուորների առողջութիւնը այն ժամանակ միայն լաւացաւ, երբ մուտ գործեց նոցա մեջ զինուորների եռամիայ փոփոխութիւնը: Ընդհանրապէս սառն կլիմայի մեջ գաղթել աւելի ձեռնառու է քան մեէ տաք, այնու ամենայնիւ այս մի փաստ է Եւրոպացւոց համար: Տաք կլիմայի մեջ գաղթել աւելի վատ ազդեցութիւն ունի մանուկների վերաց: զօր օրինակ Եղիպտոսի կամ արևելեան Հնդկաստանի մեջ բնակւող Եւրոպացիների մանուկների մահը շափականց սաստիկ է լինուում: Հինգ տարեկանից աւելի փոքր եղող մանուկներին եթէ տաք կլիմայի տակ տանենք, այն ժամանակ բոլորն էլ կմեռնեն առանց բացառութեան: մեծ մանուկները չոր տաք կլիմայում բաւական մեծանում են, իսկ խօնաւ տաք կլիմայում չուտով ոջնանումնեն: Սարսափելի կոտորածներ յառաջացնում են մահը թշուառ բնակիչների մեջ, որոնք ընկած են այնպիսի երկրներում: ուր կլիմայի անմիջական վատ ազդեցութեան հետ միանումէ և զետնի վեստակար ցնուամերը:

Այդպիսի պայմաններում կլիմային ընտելանալը անկարելի է, և գրեաթէ մահեանից ազատւելու միակ հնարքն է փախչել: հեռանալ ոյզպիսի տեղերից: Այս պատճառաւ տաք երկրներում նոր եկողներին բարի խորհուրդ է տրւում հեռանալ ծովային ափերից և նաւահանդիսու ունեցող քաղաքներից: այնու ամենայնիւ պէտք չէ երկար մնալ այդպիսի տեղերում, այլ շտապել, որքան կարելի է, միջին երկրներ, աւելի բարձր և չոր տեղերու:

Նոր պայմաններին յարևարւոծ կանոնուոր կեռնք վարելը բաւական թեթևացնումէ կլիմային ընտելանալը: Գաղթականները պէտք է յարմարացնեն իրենց կեանքը տեղական բնակիչների կեանքի հետ: որոնց հետ պարտական են, որքան կարելի է, չուտով ծանօթանալ: Սառն կլիմայից զէպի տաք կլիմայ գաղթող մարդկանց համար շատ վեստակարէ ոգելից ըմպելիներ գործածելը մինչև անգամ շափաւոր քանակութեամբ: Սառն կլիմայում բնակւելուս պէտքէ մենակից աւելի պահպանել զգայուն չնշառական գործարանները ցուրտ օղի ազդեցութիւնից և ըստ կարի պահպանել ինքն իրեն սաստիկ ջերմութեան աստիճանի փոփոխութիւնից:

Իսկ դալով նոր կլիմայի մեջ բնակւելու ժամանակին, ըստ ընդհանուր կանոնին պէտք է ընտել տարւոյ այն եղանակները, երբ նոր տեղի տարւայ եղանակի և ջերմութեան աստիճանի պայմանները փոքր իշատէ նմանեն հայրենիքի կլիմայի պայմաններին:

Արևագարձի երկրներ գաղթող Եւրոպացին, ամենից լու կանէ՝ որ զնոյ այնտեղ արևագարձային ձմռւոյ միջոցին այսինքն տարւոյ սառն և չոր եղանակում: հարաւային երկրի բնակիչը պարտական է գաղթել հիւսիսացին երկրներ ամառւոյ միջոցին: Թէ որ հարկաւոր է երթալ այնպիսի կլիմայի տակ, որը սաստիկ զանազանուումէ հայրենիքի կլիմայից,

այն ժամանակը պէտք չէ միանգամից դադթել, այլ պէտքէ զնալ ճանապարհի վերայ երկար կամ քիչ ժամանակ՝ որպէս զիաստիճանաբար անցնի դէպի կլիմայի նոր պայմանները, որոնք առողջութիւն պահպանելու համար շափաղանց օգտակար են:

ԲՆ-ՀԵ-Դ ԴԵ-ԱՐ-Շ ՀԵ-ԱՐ-Շ

Տեսի ընտրութեանը, Ամեն մարդկային զադթականութեան մէջ կան բնակիչների առողջութեան մասն վնասակար պայմաններ:

Արդեն նոյն խնքն բնակութեան տեղերը շատ գէպքերում անցածող են որովհետեւ հին ժամանակներում ի նկատի չունեին թէ այս կամ այն տեղ առողջարար է, այլ միայն նայում մէին նորա քիչ կամ շատ ճանապարհների յարմարութեան ու հաղորդակցութեան և անարգելք կենսական պիտույքներ ստանալուն, Աւստի մարդիկ ի վաղուց զլիսաւուալէս բնակեցան լճերի և զետերի մօտ վախենալով ցած և շատ անգամ ճախճախուա ամերից, Այժմ թէպէտ և տեղերի վնասակար յատկութիւնները իմացւած են, բայց ափսոս որ անկարելի է լինում ուղղել անցեալ դարերի սխալմունքները և տեղափոխել քաղաքներն ու գիւղերը առելի առողջարար կողմեր, բայց կարելի է շոապել և թուլացնել վնասակար ազգեցութիւնների ոյժերը համապատասխան չափով, բայց որովհետեւ այս խնդիրը տեղական բնակիչների միջոցներից և ուժից բարձր է, ուստի տերութիւնը պէտք է որ նորանց մինչև անգամ անցամար գէպքերում, աշխատի տեղափոխել լաւ տեղեր:

Նոր բնակութիւններ հաստատելու ժամանակ պէտքէ ամենից առաջ ի նկատի սւնենալ տեղի առողջապահական պայմանները, պէտք է փախչել ճահիճների, զետափերի և լճերի մօտ լինելուց, որոնք ենթարկւած են շատ ողողման, նոյնպէս և քաղաքներն ու գիւղերը չպէտք է լինին ձորերի կամ նեղ հովհանների, մէջ, ուր հոսումն մերձակայ բարձրաւ անգակներից ստորերկրեայ ջրերը, զետնի խոնաւութեան պատճառ ով անտառների մէջ կամ սառն կլիմայում չէ կարելի կանգնել, այլ ընդհակառակն, փոքր ինչ դա իվայր լերնատափերում, որոնք պաշտպանեած են սառն քամիներից, բայց այնու ամենայնիւ մերձենալ օգային հոսանքներին շատ յաջողակ է, որովհետեւ բնական զառ ի վայրը ընդունակ է զետնի խոնաւութիւնը ցամաքացնելու, նոյն է վերաբերում նաև զետերի և ծովերի բարձր ուժայոստ ափերին:

Քաղաքների և բնակութեան վնասական պայմանները, բնակչների երան-թիւնը, — հին վայրենացած ժամանակների քաղաքական պայմանների պատճառ ով շատ տեղերում քաղաքները շրջապատւած են պատերով և խրամներով, եւ որովհետեւ ժողովուրդը հարկադրւած էր բնակել փոքր տարածութեան վերայ, ուստի բնականաբար յառաջ կդան իւրաքանչիւր ճանապարհորդին ծանօթ արեմտեան քաղաքների նեղ և զալարծոյ փողոցներ, նրափափողոցներ իւրեանց բարձր աներով, որոնց մէջ օդն ու լոյն հաղիւ ներս են մտնում:

Ներկայ ժամանակումս երբ քաղաքական պայմանները չեն պահանջում քաղաքներում այլպիսի շինութիւններ, և երբ հետզհետէ սովորութենք գնահատել մաքուր օղը, այս բարբարոսականաժամանակի մացորդները դառնումն ևս առաւել անբաղդութիւն, որովհետեւ նորանք շատ անգամ անյաղթելի արգելք են լինում քաղաքների առողջապահական պայմանները լաւացնելուն:

Այժմս մենք շատ յօժարութեամբ քանդած կլինեինք քաղաքների տների տմբողջ կարգերն ու թաղերը, բայց ափսոսոր շատ գժուար է ուստի պէտքէ բաւականանալ միայն նորանով, որ եթէ յաջողուի կոտրել մի օրեւ է տեղ (прогалинка) և ճանապարհ տու արեի ճառագայթները քաղաքի բնակարաններում ներս մացնելու համար:

(Ըստ Հայութիւնի):

Ա. Տ. Գաբրիէլլան.

ԸՆՏԱՆԻՔԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ.

(Ահայլէց)

Ընտանիքը կազմումէ առաջին և ամենակարևոր դոլոց, ուր գաստիւրակումէ մարդի բնաւորութիւնը: Նորա մէջ մարդը ստանումէ իւր ամենալաւ կամ ամենավատ բարոյական կրթութիւնը: որովհետեւ նա ընտանիքի մէջ է առնում իւր վարքի կանոնները, որոնք նորան այլ ևս չեն թողնում մինչեւ նորա կեանքի վերջը:

Շատ գործնական է այս առածը թէ: « ձեւերը մարդին մարդ են շինում», և զարձեալ ուրիշը: « միտքը մարդին մարդ է շինում»: բայց սոցանից աւելի ճիշտը երրորդ առածն է թէ « ընտանիքը մարդ է ստեղծում»: տնային զաստիաբակութիւնը իւր մէջ ոչ միայն խելքի և ձեւերի զարգացումն է պարունակում, այլ և բնաւորութեան զարգացումը: Ընտանիքի մէջ զիսաւորապէս զարգանումէ սիրու, ստեղծումն սովորութիւններ, զարթնումէ միտքը և կազմումէ բնաւորութեան լաւ կամ վատ շտեմարան: Այս իսկ ալզեի բից, լինի նա մաքուր կամ վարակիչ, բղխումն բոլոր հիմական կանոնները, որոնցով հասարակութիւնը առաջնորդումէ: Նշնիսկ օրէնքները յառաջանում են ընտանիքից: մասնաւոր կեանքի ժամանակ մանուկների մտքում ցանւած ամենաչնչին (հատւածական) կարծիքներն անգամ վերջերում հանդէս են դալիս և գառնում են հասարակական կարծիք: ազգերը դուրս են գոլիս մանկական սենեակից: և այն մարդիկը, որոնց յանձնած է առաջնորդ լինել մանսէկի առաջին քայլերին, կարող են մինչեւ անգամ աւելի ազգեցութիւն ունենալ քան թէ նոքա, որոնց ձեռքում գտնումէ կառավարութեան սանձը, ժիւլ Սիմոնը ասումէ: « եթէ քաղաքական բարեգործութիւնների հիմը չեն կազմում նոցա սրբագործող ընտանեկան բարեգործութիւնները, այն ժամանակ քաղաքական